

## «Ամանորյա հեքիաթը Yerevan Park-ում» գովազդային վիճակախաղի մասնակցության պայմաններ

1. Գովազդային վիճակախաղը (այսուհետ՝ Վիճակահանություն) անցկացվում է «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ (այսուհետ՝ Կազմակերպիչ կամ Բանկ) կողմից:
2. Վիճակահանության ներքոգրյալ բոլոր պայմանների պահպանման դեպքում Վիճակահանության մասնակիցը հնարավորություն է ստանում հաղթելու Երևան Պարկի թվով 4 մեկանգամյա տոմս:
3. Վիճակահանությանը մասնակցելու հնարավորություն կստանան այն անձինք, որոնք 2023 թ. դեկտեմբերի 18-ին՝ Երևանի ժամանակով ժամը 14:00-ից սկսած մինչև 2023 թ. դեկտեմբերի 21-ը՝ Երևանի ժամանակով ժամը 23:59-ը ներառյալ.
  - կհետևեն «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ ֆեյսբուքի պաշտոնական էջին՝ <https://www.facebook.com/Ameriabank>,
  - այս հրապարակման տակ մեկնաբանություն կթողնեն՝ նշելով (tag) ֆեյսբուքյան իրենց 3 ընկերներին:
4. Վիճակահանության մասնակցությունն անվճար է:
5. Վիճակահանության արդյունքների ամփոփումը տեղի կունենա ս.թ. դեկտեմբերի 22-ից մինչև դեկտեմբերի 26-ն ընկած ժամանակահատվածում Ամերիաբանկի ֆեյսբուքյան էջի Վիճակահանության մասին հրապարակման մեկնաբանության բաժնում էկրանի տեսագրության (screen recording) միջոցով:
6. Վիճակահանության հաղթող կճանաչվի այն մասնակիցը, ում անունը պատահականության սկզբունքով՝ Comment picker գործիքի միջոցով կընտրվի Վիճակահանության ամփոփման ընթացքում:
7. Հաղթող մասնակցի հետ Բանկը լրացուցիչ կապ կհաստատի՝ նշելով մրցանակի ստացման եղանակը և վայրը:

8. Մրցանակը ստանալու համար հաղթողը պետք է անձամբ մոտենա Բանկի կողմից նշված վայր՝ ներկայացնելով անձը հաստատող փաստաթուղթ:

Գովազդային վիճակախաղի կազմակերպիչ՝ «Ամերիաբանկ» ՓԲԸ  
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Վազգեն Սարգսյան 2  
Հեռ.՝ 010 561111